Հայ-Ռուսական համալսարանում գործող
ՀՀ Բարձրագույն որակավորման կոմիտեի
իրավագիտության 063 մասնագիտական խորհրդին
(հասցե՝ 0051, ք. Երևան, Հովսեփ Էմինի փող. 123)

ԿԱՐԾԻՔ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍ, ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՈԿՏՈՐ, ՊՐՈՖԵՍՈՐ ԱՇՈՏ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ

Արման Թադևոսյանի՝ «Ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնության ինստիտուտը՝ որպես անմիջական ժողովրդաիշխանության իրացման ձև» վերտառությամբ՝ ԺԲ.00.02 - «Հանրային իրավունք» (սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսության թեման ունի ակնհայտ արդիականություն: Դա պայմանավորված է այն հիմնավորմամբ, որ ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնության արժեքանական նշանակության բացահայտմանն ուղղված յուրաքանչյուր գիտական հետազոտություն անկասկած համակարգային նշանակություն ունի հատկապես իրավաբանական դոկտրինում իրավական այդ երևույթի վերաբերյալ տեսական և միասնական մոտեցումների ձևավորման համատեքստում:

Բացի այդ, գրախոսության ներկայացված ատենախոսության առանձնահատկությունն այն է, որ թեև Հայաստանի Հանրապետությունում 2015 թվականի սահմանադրական փոփոխություններով ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնության ինստիտուտի ամրագրումն ինքնին որոշակի նպատակներ էր ենթադրում, այդուհանդերձ, համաձայնելով հեղինակի տեսակետին, որ սահմանադրական այս ինստիտուտի լիարժեք և արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ իրավական դաշտը բավականին թերի է, և առկա են մի շարք արդիական և համակարգային լուծում պահանջող խնդիրներ (էջ 4):

Միաժամանակ, այս հիմնավորմամբ, կարելի է համաձայնվել հեղինակի հետ, որ ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնության որպես սահմանադրական ինստիտուտի և անմիջական ժողովրդաիշխանության իրականացման ձևի վերաբերյալ հիմնախնդիրների՝ թե՛ տեսական կարևորության ու նշանակության, և թե՛ սահմանադրաիրավական կարգավորումների կատարելագործման համատեքստում համակարգային վերլուծության իրականացմամբ է պայմանավորված ատենախոսության թեմայի ընտրությունն ու արդիականությունը (էջ 3-4):

Միևնույն ժամանակ, գրախոսության ներկայացված ատենախոսությունն աչքի է ընկնում նաև իր գիտական առանձին դրույթների և եզրահանգումների կարևորության և գիտականության: Այսպես, կարծում եմ, որ հետազոտության նյութի շարադրանքի և հատկապես պաշտպանության առաջադրվող որոշակի

դրույթների ու եզրահանգումների համակարգված ներկայացնելուն առավելապես նպաստել է հետազոտության ենթակա հարցերի ընտրության տրամաբանական հերթականությունը, թեմային առնչվող ելակետային նշանակություն ունեցող հարցադրումները և կատարված ամփոփումներն ու ընդհանրացումները:

Անշուշտ, պաշտպանության ներկայացվող գիտական դրույթների և եզրահանգումների հիմնավորման աստիճանը գնահատելիս անհրաժեշտ է նկատի ունենալ, որ դրանց հետ կարելի է և չհամաձայնվել, սակայն կարևոր է ընդգծել, որ բոլոր դեպքերում դրանք ուղեկցվել են հեղինակային պատկերացումներով, հիմնավորումներով և փաստարկումներով:

Կարծում եմ, որ հաջողված կարելի է համարել՝ ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնության ինստիտուտի էության ու բովանդակության բացահայտման հիմնախնդիրների (էջ 72-92), ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնության սահմանադրաիրավական ամրագրման ու իրացման առանձնահատկությունների (էջ 105-148) և էլեկտրոնային ժողովրդավարության համատեքստում սահմանադրական այդ ինստիտուտի զարգացման հեռանկարների (էջ 149-159) հետազոտության արդյունքների վերաբերյալ հեղինակի դատողությունները:

Այս առումով խրախուսելի է հեղինակի կողմից նման աշխատանք ներկայացնելը, որի հիմքում առաջադրված են հետազոտական կարևոր նշանակություն ունեցող այնպիսի խնդիրներ, ինչպիսին են՝ ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնությունը որպես սահմանադրական ինստիտուտի և անմիջական ժողովրդաիշխանության իրականացման ձևի արդի վիճակի ու հիմնահարցերի հետազոտումը:

Ընդհանուր առմամբ հեղինակն ուսումնասիրել է համարժեք մասնագիտական գրականություն և վերլուծել թեմային առնչվող գիտագործնական նյութ: Հեղինակը դրսևորել է թեմային առնչվող տեսական աղբյուրների համարժեք իրազեկվածություն, ինչպես նաև դրանցից օգտվելու և պատշաճ վերլուծություններ կատարելու անհրաժեշտ ունակություն:

Ատենախոսության կառուցվածքը մասամբ է հնարավորություն տվել ընտրված հարցադրումների առնչությամբ նյութի շարադրանքը դարձնելու առավել տրամաբանական ու ամբողջական, մասնավորապես առանձին հիմնահարցերի համակողմանի ուսումնասիրությունը նպաստել է մասնավոր ու կոնկրետ խնդիրների ամբողջական հետազոտությանը:

Ատենախոսությունը, որոշ բացառություններով հանդերձ, շարադրված է հստակ ու միաժամանակ պատշաճ գիտական լեզվաոճով:

Միաժամանակ, աշխատանքը զերծ չէ որոշ թերություններից, որոնց առնչությամբ ստորև ներկայացնում եմ հետևյալ նկատառումները.

1. Ընդհանուր բնույթի նկատառումների շրջանակում կցանկանայի նշել, որ ատենախոսական աշխատանքի կառուցվածքում պետք է պահպանվեր որոշակի տրամաբանական կապ: Այսպես, ատենախոսության թեմայից հետևում է, որ աշխատանքի հետազոտության հիմքում պետք է դրված լիներ ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնության վերաբերյալ հիմնահարցերի հետազոտությունը որպես առաջնային պայման, այդ թվում որպես ժողովրդաիշխանության իրացման ձև, այնուհետև համակարգային հետազոտության և տեսական-իրավական հիմնախնդիրների վերլուծության արդյունքում, բացահայտվեին և ներկայացվեին հետազոտության արդյունքները՝ որպես իրավագիտության ոլորտում կարևոր նշանակություն ունեցող խնդրի լուծում: Սակայն, ատենախոսության առաջին գլուխն ամբողջությամբ նվիրված է ժողովրդաիշխանության սկզբունքի

իրավական բովանդակության և իրացման հիմնախնդիրներին, որոնք թեև առնչվում են հետազոտության առարկայի հետ, բայց դա դիտարկել որպես տեսական հետազոտության հիմք ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնության հետ, կարծում եմ այնքան էլ տեղին չի:

Այնուհետև, ընդհանուր բնույթի նկատառումների շրջանակում անհրաժեշտ է նաև նկատել, որ ատենախոսության վերտառության և բովանդակության մեջ գերակշռում է վերացարկմամբ (աբստրակցիա) պայմանավորված ընդհանրացումներ, որոնք արտահայտվում են հասկացությունների, կատեգորիաների և իմացության այլ ձևերով: Այսպես օրինակ, աշխատանքի ամբողջ տեքստում ենթադրվում է, որ հետազոտության առարկա պետք է դիտարկվեն ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնության մասին գիտատեսական հիմնահարցերը:

Այդ իմաստով հեղինակի կողմից ներկայացվում են մասնագիտական գրականությունից հայտնի կարծիքներ առանձին եզրույթների բովանդակային նշանակության, մասնավորապես՝ «հիմունքներ», «սկզբունքներ», «ազգ», «Ժողովուրդ», «պառլամենտարիզմ», «ժողովրդավարություն» և այլ եզրույթների վերաբերյալ, սակայն աշխատանքում այդպես էլ չեն համակարգվում այդ տեսակետները, ավելին հեղինակի կողմից որևէ ընդհանրական մոտեցումներ ու գնահատականներ չեն տրվում, և արդյունքում ատենախոսական աշխատանքը առավելապես կրում է նկարագրական կամ տեղեկատվական բնույթ:

Ավելին, հեղինակը վկայակոչում է Սահմանադրությունը, նշելով, որ՝ «2015թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության առաջին գլուխը ամրագրում է **հայոց պետականությունը** բնորոշող հիմնարար սկզբունքները», սակայն հարկ է նկատել, որ «հայոց պետականություն» արտահայտությունը հիշատակված գլխում այդպես էլ տեղ չի գտել, այն առկա է միայն նույն Սահմանադրության նախաբանում, երբ վկայակոչվել է Հայաստանի անկախության մասին հռչակագիրը (էջ 18):

Նույնիսկ, հետազոտության նպատակների ու խնդիրների առաջադրման մասով անհասկանալի է թե հետազոտության թեմային նվիրված հարցերի շրջանակում՝ «սահմանադրական կարգի հիմունքների բացահայտումը» կամ «ժողովրդաիշխանության սկզբունքերի հետազոտումը» որքանո՞վ են դիտարկվել որպես գիտատեսական հիմք ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնության վերաբերյալ հիմնախնդիրների հետազոտության համար (էջ 7):

2. Հեղինակի կողմից որպես պաշտպանության ենթակա գիտական նորույթ (կետ 1) ներկայացվել է հետևյալը, որ՝ «.... հիմնավորվում է այն մոտեցումը, որ ՀՀ Սահմանադրության մեջ ամրագրված «հանրային իշխանություն» հասկացության ներքո, ի թիվս պետական իշխանության և տեղական ինքնակառավարման, պետք է հասկանալ նաև ժողովրդի անմիջական իշխանությունը ...» (էջ 9):

Սակայն, նույն դրույթի վերաբերյալ հեղինակը աշխատանքի 1-ին գլխի 1.1-րդ ենթագլխում նշում է, որ՝ «որոշ հեղինակներ էլ պետական իշխանության և տեղական ինքնակառավարման հետ մեկտեղ որպես հանրային իշխանություն են դիտարկում նաև ժողովրդի կողմից անմիջականորեն իրականացվող իշխանությունը» (էջ 31): Այստեղ պարզ է դառնում, որ պաշտպանության ներկայացված գիտական նորույթը այնքան էլ նորույթ չէ, այն իմաստով, որ մասնագիտական գրականության մեջ այդ թեզն արդեն իսկ շրջանառվում է, ինչի կապակցությամբ անհրաժեշտ է հեղինակի կողմից լրացուցիչ պարզաբանում ներկայացվել:

3. Ատենախոսությունում պաշտպանության ներկայացված որոշ հիմնադրույթների շարադրանքը նաև հնարավորություն չի տվել լիարժեք բացահայտելու դրանց էությունն ու գիտականությունը: Այսպես, պաշտպանության 2-րդ կետով ներկայացված եզրահանգմամբ հեղինակը հիմնավորված է համարել այն դիրքորոշումը, համաձայն որի՝ «հայրենական իրավագիտությունում «ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնություն» հասկացության վերաբերյալ չկա ձևավորված միասնական մոտեցում, հստակեցված չէ նաև վերջինիս էությունն ու բովանդակությունը: Ժողովրդական, քաղաքացիական բազմատեսակ նախաձեռնությունների մեջ ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնությունն առանձնանում է նրանով, որ ուղղված է նորմատիվ իրավական ակտի նախագիծ առաջադրելու միջոցով օրենսդրության մեջ փոփոխություններ իրականացնելուն» (էջ 9-10): Ինքնին այս եզրահանգումը հանրաճանաչ է, հետևաբար խնդրահարույց՝ որպես գիտական դրույթ դիտարկվելու տեսանկյունից:

Կամ, աշխատանքի 3-րդ գլխի 3.2-րդ ենթագլխում և պաշտպանության 4-րդ կետով ներկայացված եզրահանգման համաձայն՝ «Հանրաքվեի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի իրականացման առարկան են հանդիսանում բացառապես հանրաքվեի հետ կապված հարաբերությունները, մինչդեռ նույն օրենքով կարգավորված են նաև ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնության իրականացման հետ կապված հարաբերությունները» (էջ 10-11, 164) դրույթը դիտարկել գիտական նորույթ այն տեսանկյունից, որ ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնության իրականացման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են ևս «Հանրաքվեի մասին» սահմանադրական օրենքով, հիմնավոր չէ և հեղինակի կողմից լրացուցիչ հստակեցման կարիք ունի:

Այնուհետև, հիշյալ տրամաբանության շրջանակում, հեղինակի կողմից ատենախոսության 3-րդ գլխի 3.1-րդ ենթագլխում և աշխատանքում պաշտպանության 7-րդ կետով որպես գիտական նորույթ ներկայացվել է դրույթ, ըստ որի՝«Հանրաքվեի մասին» ՀՀ սահմանադրական օրենքով Կենտրոնական ընտրական հանձնաժողովին վերապահվել են ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնության իրականացման գործընթացում բազմաթիվ լիազորություններ, որը չի բխում Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանադրաիրավական կարգավիճակից և հակասում է ՀՀ սահմանադրության 194-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերին» (էջ 12, 123): Այդ կապակցությամբ կարծում եմ, որ ենթադրյալ սահմանադրականության տեսանկյունից օրենսդրական որևէ ակտի գնահատման վերաբերյալ արձանագրումն ինքնին չի կարող ընկալվել որպես պաշտպանության ներկայացված գիտական դրույթ, քանի որ դրանք բովանդակային առումով ու նշանակությամբ տարբեր երևույթներ են:

Իսկ աշխատանքի 3-րդ գլխի 3.1-րդ ենթագլխում և պաշտպանության 8-րդ կետով ներկայացված դրույթով նախատեսվում է, որ՝ ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնության իրականացման կառուցակարգում Սահմանադրությամբ սահմանված այդ նախաձեռնության մասնակիցների թվակազմի, ինչպես նաև Սահմանադրության ընդունման կամ փոփոխման և օրենքների նախագծերի հանրաքվեով ընդունման համար անհրաժեշտ ձայների փոփոխության վերաբերյալ առաջարկությունն ինքնին պետք է ընկալել որպես գիտական նորույթ: Այդ կապակցությամբ կարծում եմ, որ դրանք կրում են հռչակագրային բնույթ կամ կարող են դիտարկվել որպես առաջարկություն, բայց ոչ որպես գիտական նորույթ (էջ 12-13, 105-132): Հիշյալ եզրահանգումը

խնդրահարույց է, գիտական նորույթի տեսանկյունից և հեղինակի կողմից լրացուցիչ հստակեցման կարիք ունի:

4. Ատենախոսության 3-րդ գլխի 3.1-րդ ենթագլխում և աշխատանքում պաշտպանության 5-րդ կետով որպես գիտական նորույթ ներկայացվել է հետևյալ դրույթը, ըստ որի՝ «գործող օրենսդրության անկատարության պայմաններում տեսական ուսումնասիրությամբ և օրենսդրության համակարգային վերլուծությամբ հիմնավորվել է, հանրաքվեով ընդունված օրենքների՝ Ազգային ժողովի կողմից ընդունված օրենքների նկատմամբ ավելի բարձր իրավաբանական ուժով օժտված լինելու հանգամանքը» (էջ 10-11, 139):

Հարկ է նկատել, որ ատենախոսությունում պաշտպանության ներկայացված հիշյալ հիմնադրույթի շարադրանքը խնդրահարույց է, այն առումով, որ Սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-1590 որոշմամբ սահմանադրական նորմերի կապակցությամբ արդեն իսկ արտահայտել է, իրավական դիրքորոշում, ըստ որի՝ «հանրաքվեի միջոցով փոփոխվող դրույթները գերակայում են Ազգային ժողովի կողմից փոփոխվող սահմանադրական նորմերի նկատմամբ», ինչը նշանակում է, որ ընթացակարգային առումով հանրաքվեով ընդունված օրենքներում կարող է փոփոխություն կատարվել դարձյալ հանրաքվեով, իսկ Ազգային ժողովի կողմից ընդունված օրենքները չեն կարող հակասել հանրաքվեով ընդունված օրենքներին: Ինքնին պաշտպանության ներկայացված հիշյալ եզրահանգումը հանրաճանաչ է, և այդ տեսանկյունից գիտական նորույթի առումով հեղինակի կողմից լրացուցիչ հիմնավորման կարիք ունի:

Կամ, աշխատանքի 3-րդ գլխի 3.2-րդ ենթագլխում և պաշտպանության 4-րդ կետով ներկայացված գիտական նորույթ է դիտարկվում՝ «Հանրաքվեի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի իրակավակարգավորման առարկան են հանդիսանում բացառապես հանրաքվեի հետ կապված հարաբերությունները, մինչդեռ նույն օրենքով կարգավորված են նաև ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնության իրականացման հետ կապված հարաբերությունները» դրույթը էջ 10-11, 164): Կարծում եմ, որ հիշյալ դրույթը խնդրահարույց է գիտական նորույթի տեսանկյունից այն իմաստով, որ ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնության իրականացման հետ կապված հարաբերությունները ևս կարգավորվում են «Հանրաքվեի մասին» սահմանադրական օրենքով, հիմնավոր չէ և հեղինակի կողմից ևս հստակեցման կարիք ունի:

Վիճահարույց է նաև աշխատանքի 3-րդ գլխի 3.2-րդ ենթագլխում և պաշտպանության 9-րդ կետով ներկայացված հեղինակային այն եզրահանգումը, անհրաժեշտ է նախատեսել այնպիսի «... կառուցակարգ, որի պարագայում Սահմանադրության փոփոխությունների նախագիծը մինչև երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունելը պարտադիր կարգով Ազգային ժողովի նախագահի կողմից ուղարկվի Սահմանադրական դատարան՝ նախնական սահմանադրական վերահսկողություն իրականացնելու նպատակով», պայմանավորված այն հիմնավորմամբ, որ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքը այդ պարտականության իրականացումը կատարվում է Ազգային ժողովի ընդունած որոշմամբ (էջ 13, 147-149): Կարծում եմ, որ հեղինակի կողմից Սահմանադրության փոփոխությունների նախագծի մասով Սահմանադրական դատարան դիմելու կառուցակարգի փոփոխության վերաբերյալ պաշտպանության ներկայացվող դրույթը ներկայացված հիմնավորումների համատեքստում հստակեցման ու հիմնավորման կարիք ունի:

Հեղինակի կողմից ատենախոսության հիմնադրույթներին առնչվող հրատարակված աշխատությունները համարժեքորեն արտացոլում են պաշտպանության ներկայացվող եզրահանգումները:

Ատենախոսության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հեղինակը դրսևորել է ինքնուրույն հետազոտություն կատարելու և դրանց արդյունքում հնարավորինս որոշակի հիմնավորումներով ուղեկցվող դատողություններ անելու անհրաժեշտ ունակություն:

Սեղմագիրն արտացոլում է ատենախոսության հիմնական դրույթներն ու բովանդակությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ Արման Թադևոսյանի ատենախոսությունը հիմնականում համապատասխանում է թեկնածուական ատենախոսությունների համար սահմանված պահանջներին, իսկ հեղինակը արժանի է իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի.

Պաշտոնական ընդդիմախոս,
Իրավաբանական գիտությունների դոկտոր,
Պրոֆեսոր՝

Ա.Հ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

27 հունիսի 2023 թ.

Ա.Հ. Խաչատրյանի ստորագրությունը հաստատում եմ՝

Եվրասիա միջազգային համալսարանի պրոռեկտոր,
դոցենտ

Ռ.Մարկոսյան

27 հունիսի 2023 թ.